Հաստատում եմ՝
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարար
Վահրամ Դումանյան

_____ սեպտեմբերի 2022 թ.

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Միաժամանակ, համաձայն Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 701-Լ, № 703-Լ և № 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 661-Լ որոշման, հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը, որով էականորեն ավելացվել են նախարարության կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների իրականացման ծավալները:

Բացի վերոգրյալից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2020 թվականի հուլիսի 15-ի № 204-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջների 8-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ Պատվիրատուն պետք է Կատարողին տրամադրի տարեկան և եռամյա ռազմավարական ծրագրերը, իսկ 9-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պետք է ներկայացնի ներքին աուդիտի ենթակա միավորները ցանկը:

Ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների և գործընթացների պատշաճ կատարումն ապահովելու

նպատակով Նախարարությունը նախաձեռնելու է ներքին աուդիտի որակավորված կազմակերպություն ընտրելուն ուղղված 2023 թ. գնման գործընթաց:

Վերոնշյալով պայմանավորված՝ անհրաժեշտություն կա Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի № 878-Ն որոշման դրույթներին համաձայն ներգրավել համապատասխան որակավորում և գիտելիքներ ունեցող փորձագետի, ով ներքին աուդիտի որակավորված կազմակերպության ընտրությանն նոր գնման գործընթացի նպատակով կուսումնասիրի Նախարարության ներքին աուդիտի միջավայրը, կհամակարգի ներքին աուդիտի որակավորված կազմակերպություն ընտրելու գնման գործընթացները, ինչպես նաև ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան Նախարարության ներքին աուդիտի եռամյա ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմման աշխատանքները կապահովի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար անհրաժեշտ գնման հայտի ու տեխնիկական բնութագրի մշակման աշխատանքների կատարումը: Նախատեսվում է նաև, որ հանդիսանալով որակավորված ներքին աուդիտոր, նա կիրականացնի Նախարարության պահանջներից բխող՝ համակարգի կազմակերպություններում ուսումնասիրությունների հետ կապված գործառույթներ:

II. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1) ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով Նախարարության ներքին աուդիտի միավոր հանդիսացող կազմակերպություններից ընթացիկ տարվա ռիսկերի տեղեկագրերի հավաքագրում, նախնական վերլուծություն,

2) հավաքագրված ռիսկերի տեղեկագրերի վերլուծության և գնահատման աշխատանքին մասնակցության հիման վրա՝ ներքին աուդիտի միավորների ռիսկերի գնահատման համաձայն Նախարարության ներքին աուդիտի եռամյա և ռազմավարական և տարեկան ծրագրերի նախագծերի կազմման աշխատանքների համակարգում՝ Նախարարության ընդհանուր գործունեության ուսումնասիրման, հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշման, ինչպես նաև Նախարարի և Նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա,

3) գնումների գործընթացի կազմակերպման կարգին համապատասխան՝ ներքին աուդիտի ծառայության գնման նպատակով պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանվող մասնագիտական խումբի կազմում ընդգրկվում, իրականացնելով օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի (գնման հայտը նախագծած ներկայացուցչի) համար նախատեսված գործառույթները,

4) Նախարարի և (կամ) գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ՝ Նախարարության համակարգի կազմակերպություններում պետական բյուջեի ծրագրերով Նախարարությանը տրամադրված հատկացումների շրջանակներում իրականացվող առանձին միջոցառումների և (կամ) Նախարարության ենթակայության կազմակերպություններում համապատասխան ուսումնասիրությունների կատարում՝ ընդգրկվելով այդ նպատակներով ստեղծվող աշխատանքային խմբերում,

5) Նախարարի և (կամ) գլխավոր քարտուղարի այլ հանձնարարությունների կատարում:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիր կնքելու պահից 1 տարի ժամկետով:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությամբ իրականացվող աշխատանքերի ապահովում, դրանց վերաբերյալ մասնագիտական խնդիրների բացահայտում, այդ խնդիրների մասնագիտական լուծման առաջարկությունների ներկայացում:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում են ներկայացնել կիսամյակային կտրվածքով՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը:

VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման վերաբերյալ հաշվետվության ամփոփումից հետո, ծրագրի 2-րդ մասով (ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը) սահմանված աշխատանքների գնահատման համար սահմանվում է 1-10 բալային սանդղակ: Հաշվետվության ներկայացման արդյունքում բավարար է համարվում միավորների ընդհանուր թվի 70 տոկոսից բարձր գնահատականը:

VII. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

Փորձագետը պետք է ունենա բարձրագույն կրթություն:

Փորձագետը պետք է ընդգրկված լինի Լիազոր մարմնի կողմից վարվող հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում:

Փորձագետը պետք է ունենա հանրային հատվածի ներքին աուդիտորի մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

Փորձագետը ներքին աուդիտին առնչվող աշխատանքները պետք է կատարի ներքին աուդիտի մասին օրենսդրության պահանջներին և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան և պահպանի ներքին աուդիտորի վարքագծի կանոնները: